ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում արձ.№05/19.04.17 ծածկագրով բաց ընթացակարգով իրականացված «AL-99,5 (13,5x0,75 L-5200) տիպի ալյումինե խողովակներ» գործարքի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2017

**<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u>** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

**<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u>** «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ:

**<u>Մոնիթորինգի առարկան՝</u>** «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

**<u>Մոնիթորինգի նպատակը՝</u>** «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

**<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u>** 2017 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2017 թվականի նեյեմբերի 15-ը:

**<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u>** «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

# «AL-99,5(13,5X0,75 L-5200) տիպի ալյումինե խողովակների» մրցույթ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ն՝ բլոկային մասի հովացման աշտարակների դետալների նորոգումը կատարելու համար, 03.02.17 թվականի հանձնաժողովի նիստի N2 արձանագրությամբ հաստատված հրավերի համաձայն, արձ.№05/19.04.17 ծածկագրով բաց ընթացակարգով կազմակերպել և անցկացրել է «AL-99,5 (13,5X0,75 L-5200) տիպի ալյումինե խողովակների» (15 000 հատ) մրցույթ՝ մրցութային հայտերի ներկայացման ժամկետ սահմանելով մինչև 2017 թվականի մարտի 31-ը:

Մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 2017 թվականի հունիսի 6-ը:

Հայտարարությունը 2017 թվականի փետրվարի 9-ին հրապարակվել է ընկերության կայքում, ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում, www.azdarar.am կայքում, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետություն» և «Գոլոս Արմենիի» օրաթերթերում:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 8 մասնակից՝ «AROTUBI IT» ՍՊԸ-ն, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, «ԱՊՈ-ԻՔՍ» ՍՊԸ-ն, «ՆՏՑ Էներգիա» ՍՊԸ-ն, «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, «Տրանզիտ» ՍՊԸ-ն, «ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-ն: Մինչև հայտերի ծրարները բացելը, «ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացուցչի խնդրանքով իրենց կողմից ներկայացված ծրարը առանց բացելու հետ է վերադարձվել հայտատուին:

Մասնակիցներից երեքի հայտերը՝ միևնույն ապրանքի համար մեկից ավելի գնային առաջարկ էին պարունակում: Հարցի պարզաբանման համար մրցութային հանձնաժողովը գրավոր դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին: Վերջինից ստացված պատասխանի հիման վրա «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ», «Տրանզիտ», «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-ների հայտերը մերժվել են: Մնացած 4 հայտերը մրցութային հանձնաժողովը համարել է ըստ էության մրցութային պայմաններին բավարար: Համաձայն գնահատման չափանիշների հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

| Զբաղեցրած տեղ | Ընկերության անվանում | Առաջարկած գին հազ դրամ ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | «AROTUBI IT» ՍՊԸ | 17 956,5 |
| 2 | «ՆՏՑ Էներգիա» ՍՊԸ | 26 045,8 |
| 3 | «ԱՊՈ ԻՔՍ» ՍՊԸ | 29 115,0 |
| 4 | «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ | 32 796,0 |

Որպես տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն 19.04.2017 թվականի նիստի №5 արձանագրությամբ հաղթող է ճանաչել «AROTUBI IT» ՍՊԸ-ին, որի հետ 01.06.2017թ.-ին կնքվել է պայմանագիր՝ 5 000 հատ խմբաքանակի համար՝ հաշվի առնելով հաղթող ընկերության պայմանը: Հարկ է նշել, որ ըստ գնման փաստաթղթերի, մատակարարը պարտավորվում էր մինչև 2017 թվականի հունիսի 6-ը մատակարարել ամբողջ խմբաքանակը, այն է 15 000 հատ, ուստի կարելի է փաստել, որ խախտվել են հայտով ներկայացված պահանջները, ինչպեսև 15 000 հատ խմբաքանակի անհրաժեշտության պահանջը սահմանափակել է այլ ընկերությունների մասնակցության հնարավորությունը:

Արձ.№05/19.04.17 ծածկագրով իրականացված «AL-99,5(13,5X0,75 L-5200) տիպի ալյումինե խողովակների ձեռքբերում» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ.

1. Նախքան մրցույթ հայտարարելն Ընկերությունը չի իրականացրել շուկայի ուսումնասիրություն:
2. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, գնային տեսանկյունից առավել ընդունելի առաջարկ ներկայացրած մասնակիցը:
3. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
4. Պայմանագրի կնքման փուլում փոխվել է ապրանքի քանակը, ինչի մասին տեղեկացվել են մրցույթին մասնակից կազմակերպությունները:

Հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

**Ընկերության անվանումը** «ՀրազՋԷԿ» ԲԲԸ

**Գնման անվանումը** AL-99,5 (13,5x0,75 L-5200) տիպի ալյումինե խողովակներ

**Գնման ծածկագիրը** Արձ. №05/19.04.17

**Գնման ձևը** Բաց մրցույթ

### ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել | ☑ | ☐ | ☐ | |

### ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 2 | Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը | ☑ | ☐ | ☐ | |

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 3 | Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել | ☑ | ☐ | ☐ | |
| 4 | Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են) | ☐ | ☑ | ☐ | |
| 5 | Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար | ☑ | ☐ | ☐ | |
| 7 | Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը | ☑ | ☐ | ☐ | |

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 8 | Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար | ☐ | ☑ | ☐ | Մրցույթը հայտարարվել է 15 000 հատ ալյումինե խողովակների ձեռքբերման համար, բայց պայմանագիրը կնքվել է 5 000 հատի համար, ինչը սահմանափակում է այլ ընկերությունների մասնակցության հնարավորությունը: |
| 9 | Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը | ☐ | ☑ | ☐ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է | ☑ | ☐ | ☐ | |
| 11 | Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը | ☑ | ☐ | ☐ | |
| 12 | Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը | ☑ | ☐ | ☐ | |
| 13 | Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը | ☑ | ☐ | ☐ | |
| 14 | Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի | ☐ | ☑ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 15 | Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ | ☐ | ☐ | ☑ | 5000 հատ քանակ սահմանելով, առավելություն է տրվել հաղթող ընկերությանը: |
| 16 | Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին | ☑ | ☐ | ☐ | |
| 17 | Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը | ☐ | ☐ | ☑ | Ընկերությունը շուկայի ուսումնասիրություն չի իրականացրել: |

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| **18** | Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը) | ☑ | ☐ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| **19** | Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ | ☑ | ☐ | ☐ | |
| **20** | Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով | ☑ | ☐ | ☐ | |
| **21** | Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին | ☐ | ☐ | ☑ | Ընկերությունը շուկայի ուսումնասիրության տվյալներ չի ներկայացրել: |